

2019-2020 ուստարի

Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման չափանիշները

9-րդ դասարան

- 1-ին հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ ենթահարց՝ 1 միավոր, 3-րդ՝ 2,5 միավոր:
2-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ ենթահարց՝ 2 միավոր, 3-րդ՝ 1 միավոր:
3-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 0,5 միավոր, 2-րդ ենթահարց՝ 0,5 միավոր, 3-րդ՝ 3 միավոր,
4-րդ՝ 2 միավոր, 4-րդ հարց՝ 3 միավոր:
5-րդ հարց՝ 1-ին ենթահարց՝ 1 միավոր, 2-րդ՝ 0,5 միավոր, 3-րդ՝ 0,5 միավոր,
4-րդ՝ 1 միավոր:

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի պատասխաններ

9-րդ դասարան

1. Հայ ժողովրդի հոգևոր կյանքի ընթացքը հարուստ է կախարդական բանաստեղծությամբ ու երգով, ճարտարապետությամբ և իմաստուն մատենագրությամբ: Հոգևոր այդ վիթխարի հարստության հիմքը Մեսրոպ Մաշտոցն է: Մաշտոցի հայտնագործությունը կենսական պահանջ էր, ինքնուրույն զարգացման վկայագիր: 387-ին Պարսկաստանն ու Բյուզանդիան բաժանեցին Հայաստանը, և այն կորցրեց իր պետականությունը: Մաշտոցը իր անըստզուտ գյուտով տվեց մեր ժողովրդի ինքնության և գոյատևման արդարացի իրավունքը, որը մինչ այսօր անբեկանելի է: Քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո իրավիճակը ավելի օրհասական դարձավ, քանի որ վերացվեցին հեթանոսական, մեհենական գիրն ու գրականությունը, և քրիստոնեական կրոնի ուսուցումը կատարվում էր այլ լեզուներով: Այս պայմաններում կենսական անհրաժեշտություն է դառնում հայոց գրի և գրականության ստեղծումը: Հակառակ դեպքում՝ իր լեզուն, կրոնը, պետությունը կորցնելու եզրին կանգնած հայ ժողովուրդը առհասարակ կդադարեր գոյություն ունենալ: Պետականությունը կորցրած, տրոհված ու հուսալքված հայության համար հայոց գրի ու դպրության ստեղծումը փրկություն էր:

Մաշտոցը հայտնագործեց մշակույթի այն հզորագույն գենքը, որը միավորեց հայության մեկուսացած բեկորները և հետագա դարերի ընթացքում դարձրեց ազգություն՝ իր հայրենիքով և մեծ մշակույթով: Ազգապահպանության գաղափարը Մաշտոցը և իր աշակերտները տեսնում էին հայերենի սերտ կապը իրենց ժամանակների զարգացած ժողովուրդների մշակույթի հետ, և նրանք ձեռնամուխ եղան աննախադեպ թարգմանության (Աստվածաշունչ, Դիոնիսոս Թրակացու «Արուեստ քերականի», թարգմանվել են «Պիտոյից» գիրքը, «Ալեքսանդրի վարքի պատմությունը», Խիկար Իմաստունի իմաստախոսությունները և այլն), Հայաստանի բոլոր գավառներում բացվեցին դպրոցներ, որտեղ դասավանդում էին Օջականի սուրբ ննջեցյալը և իր նվիրյալ աշակերտները:

Մաշտոցի անմահ գործին ու անձին նվիրված բազմաթիվ ստեղծագործություններ գրվեցին ոչ միայն միջնադարում, այլև հետմիջնադարում ու մեր օրերում:

Կորյուն«Վարք Մաշտոցի», Մովսես Խորենացի«Հայոց պատմություն», Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն», Մովսես Կաղանկատվացի «Պատմություն Աղվանից աշխարհի», Կարապետ Սասնեցի «Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. Վարդապետին Մեսրոբայ», Սիամանթո«Սուրբ Մեսրոպ» պոեմը, Դերենիկ Դեմիրճյան«Մեսրոպ Մաշտոց»անավարտ վեպը, Պարույր Սևակ «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»պոեմը, Հովհաննես Շիրազ, Միլվա Կապուտիկյան և այլք:

Մեսրոպ Մաշտոցն ասաց.«Որդի՛ս, էլ ինչո՞վ ես հույսը բերդիս.....» Շիրազ
.....Եվ Մեսրոպի սուրբ հանճարով դարձել է զիր ու մագաղաթ.....Ս.Կապուտիկյան
.....Ծնվեց, որ ծնվենք, եղավ, որ լինենք

Եվ անմահացավ, որ անմահանանք..... Պարույր Սևակ

2. V դարն իրավամբ համարվում է հայ գրականության Ոսկեդարը, քանի որ ստեղծվեց հայոց այբուբենը՝ հայ ժողովրդի անմահության բանալին, թարգմանվեցին Աստվածաշունչը և այլ մատյաններ, հայերենով գրվեցին առաջին մատյանները, որոնց շարքում անմրցելի է Պատմահոր «Հայոց պատմությունը»,որը դարձավ մեր ժողովրդի ծննդյան վկայականը՝ պատասխանելով ովքե՞ր ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ր ենք գնում հարցերին: Քերթողահայրը մատյանը գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով: 480-ական թվականներին Խորենացին արդեն 70-ամյա այր էր՝ իմաստուն, խոհուն, հելլենական ողջ մշակույթը յուրացրած: Իր իսկ խոստովանությամբ այս առաջարկը խիստ հաճելի էր իրեն, և նա սիրով հանձն է առնում գրելու հայ ժողովրդի ամբողջական պատմությունը: Մարգպան Սահակ Բագրատունին երկու պայման է դրել Խորենացու առջև «Համառոտաբանություն և ստուգաբանություն»,ուստի Պատմահայրը ուղղակի պարտավոնված էր այն ավարտելու կարճ ժամանակահատվածում, և քանի որ մարգպանի գոհվելուց հետո նա կորցնում է իր հովանավորին և դառնում չարամիտ մարդկանց հարձակումների թիրախ, հասկանալի է դառնում Պատմահոր՝ որոշ նյութերին համառոտ անդրադարձը: Պատմահոր անխոնջ աշխատանքի շնորհիվ մեզ են հասել հայ բանահյուսության եզակի նմուշներ՝ առասպելներ և վիպերգեր, որոնք ընդամենը մի փոքր մասն են կազմում մեր հնագույն բանահյուսության, բայց այդքանն էլ բավական է, որպեսզի մենք ճանաչենք մեր նախնիներին ու ծանոթանանք մեր անտիկ մշակույթին:

Մեզ հասած միակ առասպելը «Վահագնի ծնունդն»է, որը մեր հնագույն պոեզիայի հանճարեղ սկիզբն է: Վահագնը հայոց դիցարանի պատերազմի, քաջության և ամպրոպի աստվածն է և մարմնավորում է բնության չորս տարրերը՝ օդը(երկինք), հողը(երկիր), ջուրը(ծով), հուրը(վառվող եղեգ): Նա խարտյաշ պատանի է՝ հուր մազերով և արեգակ աչքերով:Վահագն նշանակում է կրակաբեր՝ վահ-բերել + ագն(ագնի)- կրակ: Ագնին հնդկական դիցաբանության գլխավոր աստվածն է: Կրակի աստծո ծնունդը ներկայացվում է որպես աշխարհստեղծման սկիզբ: Վահագնը ծնվելուն պես վազում է մարտնչելու տիեզերքը կործանել կամեցող չար ուժերի դեմ և ստանում Վիշապաքաղ անանումը: Խորենացին գուսաններից բառացիորեն գրի է առել այս չքնաղ հիմներգը, որը երգվել է նաև մեզ անհայտ եղանակով: Այն հնչել է, ռիթմիկ և երաժշտական, որն արդյունք է որոշ բառերի և ներքին հանգերի կրկնության: Հայ ժողովուրդը Վահագնի կերպարում տեսել է իր ազատարարին, նրա մեջ մարմնավորել է իր պայքարող մարտական ոգին: Հետագա վիպական պատմություններում Վահագնը հանդես է բերվել որպես հերոս մարդ, Տիգրան Մեծի որդիներից մեկը: Վահագնը համարժեք է հունական Արես աստծուն, նրա մասին երգերը շատ նման են Հերակլեսի մասին երգվող երգերին. Այդ մասին է վկայում Պատմահայրը:

Առասպելը վիպերգից տարբերվում է նրանով, որ առասպելը գրույց է բնության ուժերը մարմնավորող աստվածների մասին, նրա նյութը դիցաբանությունն է, իսկ վիպերգը՝ ավանդավայր, հիմնականում անդրադառնում է ժողովրդի իրական պատմական նյութին՝ ներառելով նաև առասպելական տարրեր: «Հայկ և Բել», «Արտաշես և Մաթենիկ», «Արտաշես և Արտավազդ», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» և այլն:

3. «Մասնա ծոեր» հերոսական էպոսը հիմնականում ստեղծվել է միջնադարում, բայց նրա հզոր արմատները մխրճված են անհիշելի ժամանակների մեջ, երբ մարդու հավատալիքների սահմանները կորչում են անհիշատակ դարերի մշտական մեջ, դիցաբանության և հեթանոսական դարաշրջանների մեջ: Մեր ժողովրդի ռամիկ ասացողներն ու գուսանները դարեր ու դարեր երգել ու պատմել են՝ ավանդելով սերնդեսերունդ և հասցրել են մինչև մեր օրերը: Այս հրաշքի իրական հեղինակը հայ ժողովուրդն է: Դարերի մեծ բանաստեղծը՝ ժողովուրդը, անսանձ երևակայությամբ խորտակելով ժամանակագրական և աշխարհագրական բոլոր սահմանները, ստեղծել է հենց իր հերոսական պատմությունը: Էպոսը գրի է առնված 9-րդ դարի կեսերից. Այն վերջնականապես ձևավորվել է 7-10-րդ դարերում և արձագանքն է արաբական արշավանքների, Թունդրակյան շարժման, Հայոց պետականության վերականգման, 100-ամյա խաղաղության:

Աշխարհի ցանկացած ժողովուրդ ունի իր դյուցազներգությունը, որը նրա պատմությունն է, մշակույթի ու կենցաղի արտացոլումը: Հույների էպոսը երգել է Հումերոսը. «Իլիական» և «Ոդիսական», գերմանացիների՝ Նիբելունգների երգը», պարսիկների՝ «Շահնամեն» (Ֆիրդոսի), ֆրանսիացիների «Ռուլանդի երգը», վրացիների՝ «Վագրենավորը». բոլորն էլ մշակվել են հեղինակների կողմից, իսկ «Մեր վեպը լեռներից բխող աղբյուրի նման անարատ և անխռով հասել է մեզ» (Ավ. Բասիակյան): Մեր էպոսը ընդհանրություններ ունի պարսկականի հետ (հոր և որդու մենամարտը), հունականի հետ (հողի և ջրի պաշտամունքը), Բոլոր էպոսներում առկա է պայքարը չարի դեմ, սերը հայրենիքի նկատմամբ:

«Մեր վեպը իր հնությամբ, իր բարձր արվեստով, իր դեմոկրատիկ, ինտերնացիոնալ, հումանիստ գաղափարախոսությամբ մտնում է դասական, առաջնակարգ էպոսների պանթեոնը: Նա տալիս է մեզ հպարտության արդար հիմք, գոյության վկայական ու ազնվության վկայական»: Ավետիք Բասիակյան

4. «Մեղեդի ծննդյան » տաղը X դարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու՝ Աստվածածնին նվիրված այլաբանական տաղերից է, որտեղ Աստվածամայրը ներկայացվում է սովորական կնոջ բոլոր հատկանիշներով: Այստեղ Աստվածածինը պատկերված է աստվածային լույսով ու մաքրությամբ, նա անչափ գեղեցիկ է, ծոցը լուսափայլ է, դաստակները՝ մանուշակի ծիրանագույն փունջ, նա մեզ ներկայանում է որպես քայլող գեղեցկություն, նրա մեջ մենք տեսնում ենք իրական կնոջ կերպարը: Տաղը այլաբանորեն ներկայացնում է իրական կնոջ գեղեցկությունը, թեև տաղի վերջում Նարեկացին հիշեցնում է, որ տաղը նվիրված է Մարիամ Աստվածածնին, բայց այլաբանական այս հնարքով նա նկարագրում է իրական, թրթռուն կնոջ գեղեցիկ արտաքինը: Սա առաջին համարձակ փորձն էր մեր գրականության մեջ, որտեղ անիրականն ու շոշափելին դառնում են մի ամբողջություն և հմայիչ ու կենդանի կինը ներկայանում է իր լուսավոր ու կենսատու սիրով: Նարեկացու հենց այս և մյուս տաղերով էլ սկսվում է Վերածնության դարաշրջանը Հայաստանում՝ մոտ երեք դար կանխելով իտալական Վերածնունդը:

5. Սայաթ-Նովան միջնադարի վերջին բանաստեղծն է. նրանով փակվում է հայ միջնադարյան գրականության փառահեղ էջը: Նա երգել է սեր ու վայելք, ըմբոստացել է անարդարության ու կեղծիքի դեմ, համարձակորեն իշխողների երեսին է շարտել ճշմարտությունը և արտաքսվել վրաց արքայազն Հերակլի արքունիքից ու բռնի ձեռնադրվել կրոնավոր: Նա իրեն անվանում է «խալիխ նոքար, ծառա», քանի որ սերում էր աշխատավոր ընտանիքից և պաշտպանում էր այդ խավի հանիրավիված շահերը:

«Աշխարհ մե փանջարա է» տաղում նա քննադատում է տեր-աղաներին, որոնք արհամարհում են *խալխին*, չեն տեսնում ու չեն լսում նրա տառապանքները:

Հանճարեղ բանաստեղծը սիրել է արքայադուստր և արքայաքույր Աննա Բատոնաշվիլուն, որն էլ դարձել է նրա անձնական ողբերգության պատճառը:

Երկտողի հեղինակը Սայաթ- Նովայով հիացած ու ներշնչված հանճարեղ Չարենցն է:

2-րդ տողի բացատրությունը չափազանց պարզ է. մեծ սիրերգակի սիրո տաղերը այսօր էլ բանալի են նորօրյա բոլոր սիրահարների համար: Նրա սիրո երգերից «մի նշանախեց անգամ չի պակասել», որովհետև սերը երբեք չի հնանում. հանճարեղ երգչի սիրո երգը երբեք չի հնանում, պատկերները չեն կորցնում իրենց արդիականությունը. Միշտ էլ ճշմարիտ է՝ «Դո՛ւն կըրակ, հա՛քածըտ կըրակ, վո՛ւր մե կըրակին դիմանամ»: